ԱՐՄԵՆ ՍԵՐԳՈՅԻ ՀԱՅՐԱՊԵՏՅԱՆ

Ծննդյան տարեթիվ՝ 10.02.1978

Ծննդավայր՝ ՀՀ, քաղաք Գյումրի

e-mail armenani@mail.ru a.hayrapetyan@shirakcenter.sci.am

Պատմական գիտությունների թեկնածու, դոցենտ Արմեն Սերգոյի Հայրապետյանն ավարտելով Գյումրու Ակադեմիական վարժարանն 1995 թ. ընդունվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվան պետական մանկավարժական ինստիտուտի պատմաբանասիրական ֆակուլտետի պատմության բաժինը, որն ավարտել է 2000 թ.:

2000 թ. ընդունվել է Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. պետական մանկավարժական ինստիտուտի նպատակային ասպիրանտուրա՝ «Հայոց պատմություն» մասնագիտությամբ:

2003 թ. ՀՀ ԳԱԱ Պատմության ինստիտուտում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն «Արևելյան Շիրակը XIX դարի առաջին կեսին /պատմաժողովրդագրական ուսումնասիրություն/» վերնագրով (վկայագիր Ա N 02115):

2006 թ. ստացել է դոցենտի գիտական կոչում:

Ա. Հայրապետյանը 2003 թ. աշխատանքի է ընդունվել ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի Նոր պատմության բաժնում որպես գիտաշխատող, այնուհետև նշանակվել ավագ գիտաշխատողի պաշտոնում:

2003-ից մինչև օրս Ա. Հայրապետյանը համատեղությամբ Գյումրու Մ. Նալբանդյանի անվ. Պետական մանկավարժական ինստիտուտի (այժմ՝ «Շիրակի պետական համալսարան» հիմնադրամ) «Պատմության և իրավագիտության ամբիոն»-ի դոցենտ է, 2017-2019 թթ. զբաղեցրել է նույն համալսարանի «Իրավագիտության և քաղաքագիտության» ամբիոնի վարիչի ժ/պ պաշտոնը:

Ա. Հայրապետյանը 2004 թ. համատեղությամբ աշխատանքի է ընդունվել նաև ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնում՝ նախ որպես գիտաշխատող, ապա նաև ավագ գիտաշխատող: 2019 թ. մինչև օրս նա «ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոն» ՊՈԱԿ-ի տնօրենն է:

2013-2018 թթ. Ա. Հայրապետյանը ՀՀ ԳԱԱ Շիրակի հայագիտական հետազոտությունների կենտրոնի գիտական խորհրդի անդամ է, իսկ 2019թ. մինչև օրս՝ խորհրդի նախագահ:

Ա. Հայրապետյանի գիտական հետաքրքրությունների շրջանակում են

Հայոց նոր և նորագույն ժամանակաշրջանի պատմության տարաբնույթ հիմնախնդիրները:

Ա. Հայրապետյանը հեղինակ է **5** մենագրությունների, **2** փաստաթղթերի և նյութերի ժողովածուների, **1** ուսումնամեթոդական ձեռնարկի և ավելի քան **90** գիտական հոդվածների, որից՝ **5** ընդգրկված են **Scopus/Webofscience (Q 1, 2023-2026)** ՄԳԾ-ում: Համահեղինակել է «Հայոց պատմություն» ակադեմիական քառհատորյակի երրորդ հատորի առաջին գիրքը, և այլն:

Ա. Հայրապետյանը 2018-2020 թթ. հանդիսացել է ՀՀ Գիտության պետական կոմիտեի ֆինանսավորմամբ իրականացվող **1** դրամաշնորհի/թեմայի ղեկավար, 2021-2027 թթ **2** դրամաշնորհի/թեմայի անդամ:

Ա. Հայրապետյանը գիտական զեկուցումներով, դասախոսություններով և ելույթներով հանդես է եկել հանրապետական և միջազգային մի քանի տասնյակ գիտաժողովներում, կլոր սեղաններում, գիտագործնական սեմինարներում, երիտասարդ պատմաբանների ամառային դպրոցներում և այլն:

Ա. Հայրապետյանը 2011թ. պարգևատրվել է ՀՀ ԳԱԱ նախագահի պատվոգրով, 2017 և 2022 թթ. ՀՀ ԳԱԱ նախագահի գովեստագրերով, 2022 թ. Ծիրակի մարզպետի պատվոգրով և այլն:

Ա. Հայրապետյանը կուսակցական չէ, ամուսնացած է, ունի մեկ դուստր և երկու որդի: